Էրիխ Մարիա Ռեմարկ
Erich Maria Remarque

# ԵՐԵՔ ԸՆԿԵՐ
# DREI KAMERADEN

*Գերմաներենից թարգմանեց Վանուհի Բաղմանյանը*

*Die Übersetzung aus dem Deutschen-von Vanuhi Bachmanyan*

Երևան 2018

ՀՏԴ 821.112.2-31 Ռեմարկ
ԳՄԴ 84(4Գեր)-44
Ռ 310

**Էրիխ Մարիա Ռեմարկ**

Ռ 403 Երեք ընկեր/ Էրիխ Մարիա Ռեմարկ.- Եր.: Էդիթ Պրինտ, 2018.-
504 էջ:

*Էրիխ Մարիա Ռեմարկի «Երեք ընկեր» ստեղծագործությունը պատերազմի հետքերն իրենց վրա կրող երիտասարդների մասին պատմություն է: Ռոբերտ Լոկամպի, Օտտո Քյոստերի և Գոթֆրիդ Լենցի ընկերությունը կոփվել է պատերազմի դաշտում: Կորցնելով շատ հարազատ մարդկանց, տեսնելով մահը, կյանքի համար պայքարը, ցավը, զգալով վախն իր ընթացքում անարդարությունը՝ այս ընկերները ամուր կապված են իրարից, նրանց հիշողությունները, պատասխանները և ճակատագրերը շատ նման են իրար:*

*Ռեմարկի «Երեք ընկեր» ստեղծագործությունը համաշխարհային գրականության գլուխգործոցներից մեկն է: Այն ամբողջովին կենսափորձառության մասին է: Աչքի է ընկնում խորության բազմաշերտությամբ, որը սիրելի է դարձնում այս գիրքը յուրաքանչյուր ընթերցողի համար: Սա գրականության այն բացառիկ նմուշներից է, որը երբեք չի կարող ժամանակավրեպ դառնալ:*

ՀՏԴ 821.112.2-31 Ռեմարկ
ԳՄԴ 84(4Գեր)-44

ISBN 978-9939-75-180-1

© Էդիթ Պրինտ, 2017
© 1937 by New York University, successor-in-interest to the literary rights of The Estate of the Late Paulette Goddard Remarque

# 1

Պղնձադեղին երկինքը դեռ չէր պղտորվել ծխնելույզների ծխով ու պայծառ շողում էր գործարանի տանիքների հետևում: Ուր որ է արևը կծագեր: Նայեցի ժամացույցին. ութից դեռ քառորդ ժամ պակաս է: Բացեցի դարպասն ու նախապատրաստեցի ընդունիչը. այս ժամին մի քանի մեքենաներ սովորաբար գալիս են լիցքավորվելու: Թիկունքից ինչ-որ խռպոտ ղողոց լսեցի հանկարծ, թվաց՝ գետնի տակից ժանգոտ պտուտակ է դուրս գալիս: Կանգնեցի, ականջ դրեցի, ապա թակով գնացի արհեստանոց ու զգուշությամբ բացեցի դուռը. կիսամութ սրահում, ցախավելը ձեռքին, մոտ ինունկիլոգրամանոց մի ուրվական էր շրջում՝ հագին կեղտոտ, սպիտակ գլխաշոր, կապույտ գոգնոց, կոպիտ հողաթափեր. համարարար Մատիլդե Շթոսն էր:

Որոշ ժամանակ կանգնած նայում էի նրա՝ գետաձիու վայելչությանը, երբ մեքենաների ռադիատորների միջև այսուայնկողմ էր օրորվում ու խեղդված ձայնով երգում հավատարիմ հուսարների մասին:

Պատուհանի մոտի սեղանին կոնյակի երկու շիշ կար. մեկն արդեն համարյա դատարկ էր, մինչդեռ նախորդ օրը՝ երեկոյան, լիքն էր: Մոռացել էի դրանցով զբաղվել:

-Տիկին Շթոս:

Երգը դադարեց, ցախավելն ընկավ հատակին, երանելի ժպիտը չքացավ: Ուրվականն արդեն ես էի:

-Հիսուս Քրիստոս,- կմկմաց Մատիլդեն և իր կարմիր աչքերով սևեռուն նայեց ինձ,- այսքան վաղ չէի սպասում Ձեզ:

-Փաստորեն հավանել եք:

-Դե հա, բայց ինչ անհարմար բան ստացվեց,- մաքրեց բերանը,- ես ուղղակի հիմար եմ:

-Լավ, մի՛ չափազանցրեք. Դուք ուղղակի հարբած եք, մեռնելու չափ հարբած:

Նա մի կերպ էր պահում հավասարակշռությունը, բեղիկ-

ները դողդողում էին, և ծեր բվի պես թարթում էր կոպերը: Բայց ատտիճանաբար ուշքի եկավ և ինքնավստահ մի քայլ արեց.

-Պարոն Լոհրամփ, ախր ես էլ մարդ եմ, սկզբում միայն հոտ քաշեցի, հետո մի կում արեցի, դե, ստամոքսս էլ կարգին չէ, հետո... Սատանան ինձ գայթակղեց: Կարիք չկար խեղճ կնոջը փորձության ենթարկել՝ շշերը թողնելով սեղանին:

Սա առաջին դեպքը չէր, որ ես նրան այդ վիճակում էի բռնեցնում: Ամեն առավոտ նա երկու ժամով գալիս է արհեստանոց՝ մաքրություն անելու: Ուզածիդ չափ գումար թողնես, ձեռք չի տա, բայց կոնյակի նկատմամբ նույնքան «անտարբեր է», որքան առնետը՝ սալի:

Ես բարձրացրի շիշը.

-Իհարկե, հաճախորդների կոնյակին չեք դիպել, բայց պարոն Քյոսթերի լավ կոնյակի վերջը տվել եք:

Մատիլդեի այլայլված դեմքով քմծիծաղ սահեց.

-Ճիշտը մնում է ճիշտ, ես լավ փորձագետ եմ, պարոն Լոհրամփ, բայց Դուք անօգնական այրուս հո չեք մատնի:

-Այսօր՝ ոչ,- տարուբերեցի գլուխս:

Կիսաշրջազգեստի բարձրացրած փեշն իջեցնելով՝ ասաց.

-Այդ դեպքում ես ծլկեմ, թե չէ պարոն Քյոսթերը որ եկավ ... Գրողը տանի...

Գնացի պահարանի մոտ և բացեցի այն.

-Մատիլդե:

Ոտքերը քարշ տալով՝ արագ մոտեցավ: Երբ մի շագանակագույն, քառանկյուն շիշ վերցրի, Մատիլդեն բողոքավորի կեցվածքով ձեռքերը բարձրացրեց.

-Դա ես չեմ, ազնիվ խոսք, ես դրան ձեռք չեմ տվել:

-Գիտեմ,- ասացի ես և մի բաժակ լցրի: -Ճանաչո՞ւմ եք նրան:

-Այն էլ ինչպե՜ս,- լպստեց շուրթերը,- ռոմ, քաղեդարյան Ջամայկա...

-Լավ է, ուրեմն խմեք մի բաժակ:

-Ես,- օրորվելով հետ-հետ գնաց,- պարոն Լոհքամփ, դա արդեն չափազանց է: Դուք ինձ քութ դանակով մորթում եք: Պարավ Ծթոսը թարուն խմել է Ձեր կոնյակը, և Դուք ստիպում եք նրան մի հատ էլ ռոմ խմել: Օ՜, Դուք սուրբ եք... Լավ է՝ մեռնեմ, քան դա խմեմ:

-Իրո՞ք,- ձևացրի, թե բաժակը տեղն եմ դնում:

-Այդ դեպքում,- բաժակը ձեռքիցս հափշտակելով՝ ասաց Մատիլդեն,- տալիս են, վերցրու, եթե անգամ չես հասկանում՝ ինչու են տալիս: Ձեր կենացը, կարծեմ այսօր Ձեր ծննդյան օրն է:

-Այո՛, Մատիլդե, գուշակեցիր:

-Իսկապե՞ս,- ձեռքս բռնելով և թափահարելով՝ ասաց նա,- շնորհավորում եմ, լիքը փող եմ մաղթում Ձեզ, պարոն Լոհքամփ:

Ապա, բերանը սրբելով, ավելացրեց.

-Այդ առթիվ մի բաժակ էլ պիտի զգեմ. չէ՞ որ ես Ձեզ սիրում եմ հարազատ որդուս պես:

-Հիանալի է:

Ես նրան մի բաժակ էլ լցրի, որից հետո, խոնարհվելով և բարեմաղթանքներ շռայլելով, լքեց արհեստանոցը:

Շիշը փակելով՝ նստեցի սեղանի մոտ: Արևի գունատ ճառագայթները պատուհանից ընկան ձեռքերիս: «Ամեն տարեդարձիդ տարօրինակ մի զգացողություն է համակում քեզ, թեկուզ առանձնապես կարևորություն չես տալիս դրան: Երեսուն տարեկան... Մի ժամանակ կարծում էի, թե քսանի էլ չեմ հասնի, և այդ զգացողությունն ինձ երկար ուղեկցեց: Իսկ հետո...»:

Արկղիկից նամակի մի թուղթ հանելով՝ սկսեցի վերհիշել: Մանկություն, դպրոց... Այս ամենն այնքան հեռու է արդեն, որ թվում է՝ չի էլ եղել: Իրականությունը սկսվեց միայն 1916-ից, երբ ես՝ որպես տասնութամյա նիհարակազմ, բարձրահասակ նորակոչիկ, զորամասի հետևի հին վարելահողերի վրա